



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

21 մարտի 2016 թվականի թիվ 7-Ա

ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՄԻԱՄՍՅԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրի 1.13-րդ կետի պահանջներով՝ Տավուշի մարզի տարածքում սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման միամսյակի աշխատանքները կազմակերպելու և անցկացնելու նպատակով,

կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ ԵՄ.

1. Տավուշի մարզում 2016թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը հայտարարել սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:
2. Միամսյակը կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով / հավելված 1/:
3. Հաստատել մարզում սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակի իրականացվելիք աշխատանքների ծրագիրը /հավելված 2/:
4. Առաջարկել համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին՝
  - 1/ Սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով տեղերում ստեղծել համապատասխան հանձնաժողովներ, կազմել և մարզպետարան ներկայացնել միամսյակի աշխատանքների ծրագրերը, ապահովել բնակչության լայն շրջանակների մասնակցությունը:
  - 2/ 2016թ. ապրիլի 23 -ը Տավուշի մարզում հայտարարել համամարզային շաբաթօրյակ:
5. Հանձնաժողովի նախագահին.
  - 1/ Միամսյակն ավարտելուց հետո պատրաստել տեղեկանք՝ մարզպետի խորհրդակցությունում արդյունքներն ամփոփելու համար:
  - 2/ Ներկայացնել լավագույն համայնք, կազմակերպություն, դպրոց, փողոց, բակ, հանգստի գոտի ճանաչվածների ցանկը՝ խրախուսանքի արժանացնելու համար:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

21 մարտի 2016թ.  
ք.Իջևան

Հաստատված է  
ՀՀ Տավուշի մարզպետի  
2016թ. մարտի 27-ի  
թիվ 7-Վ կարգադրությամբ

Կ Ա Ձ Մ

ՀՀ Տավուշի մարզում սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակը կազմակերպելու և աշխատանքների արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի

- Մ.Մխիթարյան - Նախագահ, ՏԻ և ՀԳՄ ՏԾ ԳՀ վարչության պետ
- Գ. Բադալյան - Քաղաքաշինության վարչության պետ
- Լ. Վանցյան - Առողջապահության և սոց. ապահովության վարչության պետի Ժ/Պ
- Վ. Սուբոյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
- Կ.Նազարյան - Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Ա.Սարգսյան - Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
- Ս.Գևորգյան - Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
- Մ.Մելքումյան - Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ
- Մ.Ղալումյան - Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

ՀՀ Տավուշի մարզպետարանի  
աշխատավազմի ղեկավար



*Արմավր* Ս. Դավթյան

Հաստատված է  
 ՀՀ Տավուշի մարզպետի  
 2016թ. մարտի 21-ի  
 թիվ 7-Ա կարգադրությամբ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԱՆՄԱՔՐՄԱՆ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ  
 ՄԻԱՄՍՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

h/h	Միջոցառման անվանումը		Կատարման ժամկետը
1	Մերթդական ցուցումներ սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների վերաբերյալ	Մ.Մխիթարյան Ս. Գևորգյան Մ. Ղալումյան	1.04.2016թ.- 1.05.2016թ.
2	Աջակցություն համայնքային հանձնաժողովներին կազմակերպչական աշխատանքներում	Մ. Մխիթարյան Գ.Բադայան Վ. Սուքոյան Կ.Նազարյան Լ. Վանցյան	1.04.2016թ.- 1.05.2016թ.
3	Աջակցություն համայնքային հանձնաժողովներին բարեկարգման, կանաչապատման և սանմաքրման աշխատանքների ընթացքում մասնագիտական օգնություն ցուցաբերելու հարցում	Վ. Սուքոյան Մ.Մելքումյան Ս.Գևորգյան Մ.Ղալումյան	1.04.2016թ.- 1.05.2016թ.
4	Հատուկ պահպանվող /հուշարձաններ, գերեզմաններ և այլն/ տարածքների բարեկարգման աշխատանքների կատարման համար ծրագրերի առաջադրում՝ ՀՄ-ների միջոցով իրականացնելու համար	Մ.Մխիթարյան ՀՄ-ների նախագահներ	մշտական
5	Համայնքների տարածքներով անցնող համայնքային և միջպետական ճանապարհների սանմաքրման աշխատանքների իրականացում	Մ.Մխիթարյան Ա.Սարգսյան Համայնքների ղեկավարներ Ճան.շահագործման կազմակերպությունների ղեկավարներ	մշտական
6	<<Շրջակա միջավայր և բնապահպանություն>> թեմայով ուսումնական հաստատություններում անցկացնել դասընթացներ	Կ.Նազարյան Ս.Գևորգյան	1.04.2016թ.- 1.05.2016թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի  
 աշխատակազմի ղեկավար



*Handwritten signature*

Ս. Դավթյան